ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1954 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ 300-ԱՄՅԱԿԻՆ

Մայիսի 4-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նիստերի դահլիճում տեղի ունեցավ սեսիա, նվիրված Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակին։

Ներածական խոսքով սեսիան բաց արեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ասաց.

«Ընկերներ.

Այս օրերին Սովետական Միության ժողովուրդները տոնում են Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակը։ Երեք հարյուր տարի սրանից առաջ ուկրաինական ժողովուրդը վերջնականապես կապեց իր բախտը ռուս մեծ ժողովրդի հետ։ Ռուս ժողովրդի հետ միասին, նրա օգնությամբ, ուկրաինական ժողովուրդը 1917 թվականին ազատագրվեց կապիտալիստների և կալվածատերերի լծից, բռնեց սոցիալիզմի ուղին և ազգային անկախություն ստանալով, ստեղծեց Ուկրաինական սովետական պետությունը, որը հետագայում իր մեջ ընդգրկեց ուկրաինական բոլոր հողերը։ Այսօր ուկրաինական սոցիալիստական ազգը և նրա պետությունը ինչպես իր տնտեսական հզորությամբ ու կուլտուրական մակարդակով, այնպես և ուրիշ շատ դեպքերով՝ գերազանցում է Եվրոպայի այնպիսի կապիտալիստական երկրների, ինչպիսիք են, օրինակ, Ֆրանսիան և Իտալիան։ Այսօր ուկրաինական ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, սովետական բոլոր ժողովուրդների հետ համագործակցելով, կառուցում է կոմունիզմի հոյակապ շենքը։

Հայ ժողովուրդը երկար դարերի ընթացքում բարեկամական հարաբերություններ է հաստատել Կիևյան Ռուսիայի հետ, և ապա Ռուսաստանյան պետության հետ։ Հայ ժողովրդի համար Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորումը նշանակում էր, որ ամրանում, էլ ավելի հզորանում է Ռուսաստանը և դրա հետ ամրանում են հայ ժողովրդի ապագայի հետ կապված լավագույն հույսերը։ Ռուսաստանի ուժեղացումը հարավում վերջի վերջո հնարավորություններ ստեղծեց, որպեսզի Հայաստանը նույնպես Ռուսաստանին միացվի։

Այդ հանդամանքը իր հերթին պայմանավորեց հայ ժողովրդի հետագա սոցիալական ազատագրումը և նրա պետականության, կուլտուրայի ու տնտեսության հրաշալի վերածնունդը։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան բերեց իր հետ հայ ժողովրդի վերածնունդը։ Ահա թե ինչու այսօր սովետական ժողովուրդների ընտանիքում հայ ժողովուրդը նույնպես տոնում է Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման երեքհարյուրամյակը, որպես իր սեփական հարազատ տոնը»։

Ընկեր Համբարձումյանի ներածական խոսքից հետո կարդացվեցին հետևյալ զեկուցումները. Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման պատմական նշանակությունը. զեկուցող՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մ. Ռ. Ներսիսյան։ Ուկրաինական ՍՍՌ-ի տնտեսության և կուլտուրայի ծաղկումը. զեկուցող՝ տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա. Հ. Մարուխյան։ Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում 16-17-րդ դարերում. զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Լ. Ս. Խաչիկյան։ Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը. զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Մ. Հակոբյան։ Ուկրաինան Հայկական սովետական պոեզիայում. զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ս. Մանուկյան։ Հայ-ուկրաինական երաժշտական կապերի պատմությունից. զեկուցող՝ արվեստագիտական գիտությունների թեկնածու Մ. Հ. Մուրադյան։